# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267) 2-10-81, (0267) 2-37-79, (0267) 2-21-21, (0267) 2-49-59, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**04 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 28-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 04-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:
   /Զեկ. Ն.Օհանյան/
2. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 28-ի <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին>> N 08-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
   /Զեկ. Ն.Օհանյան/
3. <<Արծվաբերդի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
   /Զեկ. Հ.Մելիքյան/
4. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող հյուրանացի շենքը, պահեստը, արտադրամասը և ծածկը հողամասով <<Էկո Գարդեն արտադրական կորպորացիա>> ՍՊԸ-ին օտարելու մասին:
   /Զեկ. Վ.Գրիգորյան/
5. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող առևտրի սրահը հողամասով Արմեն Ալբերտի Փոլադյանին օտարելու մասին:
   /Զեկ. Վ.Գրիգորյան/
6. Խորեն Սամվելի Աղասյանի սեփականությունը հանդիսացող 11-051-0130-0011 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
   /Զեկ. Վ.Գրիգորյան/

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267) 2-10-81, (0267) 2-37-79, (0267) 2-21-21, (0267) 2-49-59, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**04 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 29-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի

*Համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդումը՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված 1
Բերդ համայնքի
ավագանու 2022 թվականի
ապրիլի 04-ի N 29-Ա որոշման

## Բերդ համայնքի 2022 թվականի եկամուտների կատարման մասին

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐ | Տարեկան պլան /հազ.դրամ/ | Ճշտված պլան հազ.դրամ | 2022թ 1-ին եռամսյակ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | | Պլան | Փաստացի | Կատ.% |
| 1 | ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ /այդ թվում հողի հարկ իրավաբան.ֆիզիկական գույքահարկ իրավաբանական | 58000,0 | 58000,0 | 13340,0 | 4902,7 | 36,8 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 105000,0 | 105000,0 | 31500,0 | 28495,1 | 90,5 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 5000,0 | 5000,0 | 1250,0 | 971,9 | 77,8 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 5200,0 | 5200,0 | 3900,0 | 3762,6 | 96,5 |
| 5 | ՀՈՂԻ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՎՃ | 16500,0 | 16500,0 | 4950,0 | 3206,0 | 64,8 |
| 6 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 63000,0 | 63000,0 | 18300,0 | 15270,4 | 83,4 |
| 7 | ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺ.ՏՈՒԳԱՆՔ. | 900,7 | 900,7 | 900,7 | 1100,0 | 122,1 |
| 8 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ | 19000,0 | 19000,0 | 4750,0 | 3653,9 | 76,9 |
| 9 | Պատվիրակված լիազորություն | 1999,0 | 1999,0 | 499,8 | 399,8 | 80,0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **272600,7** | **272600,7** | **79390,5** | **61362,6** | 77,3 |
| 10 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 984550,1 | 984550,1 | 246137,5 | 246137,5 | 100,0 |
| 11 | եկամուտների կորուստ./այլ դոտ/ | 15231,9 | 15231,9 | 3808,0 | 3808,0 | 100,0 |
| 12 | Այլ դոտացիա | | | | | |
| 13 | ՊԵՏ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑ.ՍՈՒԲՎԵՆՑԻԱ | 3268,3 | 3268,3 | 672,7 | 672,7 | 100,0 |
| 14 | կապիտալ սուբվենցիա | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1003050,3** | **1003050,3** | **250618,2** | **250618,2** | 100,0 |
| 15 | նվիրատվություն/ֆոնդ/ | | | | | |
| 16 | նվիրատվություն/վարչ/ | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **1277650,0** | **1277650,0** | **330508,5** | **312380,6** | 94,5 |
| 17 | ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | **302560,1** | **302560,1** | **302560,1** | **302560,1** | |
| 18 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 159327,9 | 159327,9 | 159327,9 | 159327,9 | |
| 19 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 143232,2 | 143232,2 | 143232,2 | 143232,2 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՄԵԼԻՔՅԱՆ

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2022 թվականի
ապրիլի 04-ի N 29-Ա որոշման

## Բերդ համայնքի 2022թ. տեղական բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Տարեկան Նախատեսված ծախս /հազ.դրամ/ | տարեկան ճշտված պլ. հազ.դրամ | 2022թ. 1-ին եռ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Պլան | Փաստացի | Կատ.% |
| 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում /01.01.01.51 | 282120,0 | 282120,0 | 56424,0 | 59555,1 | 105,5 |
| 2 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/01.03.03..51/ ՔԱԿԳ | 1999,0 | 1999,0 | 498,4 | | 0,0 |
| 3 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /01.06.01.51/ | 62200,9 | 62200,9 | 12440,2 | 2816 | 22,6 |
| 4 | Քաղաքացիական պաշտպանություն /02.02.01.51/ | 2000,0 | 2000,0 | 500,0 | | 0,0 |
| 5 | Գյուղատնտեսություն /04.02.01.51/ | 4450,0 | 4450,0 | 934,5 | | 0,0 |
| 6 | ճանապարհային տրանսպորտ /04.05.01.51/ | 120816,8 | 120816,8 | 30204,2 | 21478,4 | 71,1 |
| 7 | Բարեկարգում և կոմունալ ծառայություն /05.01.01.51 | 294485,8 | 294485,8 | 73621,5 | 70900,5 | 96,3 |
| 8 | Ջրամատակարարում/06.03.01.51/ | 209743,4 | 209743,4 | 38364,2 | 21493 | 56,0 |
| 9 | ջրագծի կառուցում /սուբվենցիա/ | | | | | |
| 10 | Փողոցների լուսավորում/06.04.01.51/ | 3400,0 | 3400,0 | 850,0 | 1523,8 | 179,3 |
| 11 | Բնակարանային շինարարության /06.06.01.51/ | | | | | |
| 12 | ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԾԱՌ որից | | | 3200,2 | | 0,0 |
| | Գրադարան | 12800,7 | 12800,7 | | 1836,9 | |
| | մշակույթի տուն | 33570,0 | 33570,0 | 8392,5 | 4813 | 57,3 |
| | Այլ մշակութային կազմ | 10000,0 | 10000,0 | 2500,0 | 1459,5 | 58,4 |
| 13 | Նախադպրոցական կրթություն /09.01.01.51/ մանկապարտեզներ | 288786,0 | 288786,0 | 72196,5 | 62886,3 | 87,1 |
| 14 | Արտադպրոցական դաստիարակություն/09.05.01.51/ Երաժշտական/ | 50190,0 | 50190,0 | 12547,5 | 6962,1 | 55,5 |
| 15 | Նախադպրոցական կրթություն /սուբվենցիա/ | | | | | |
| 16 | Սոց ծախսեր /10.07.01.51/ | 12000,0 | 12000,0 | 3000,0 | 300,0 | 10,0 |
| 17 | Պահուստային ֆոնդ | 191647,5 | 191647,5 | 15131,8 | 22000,0 | |
| 18 | ԳՈՒՅՔԻ ՀՈՂԻ ՕՏԱՐՈՒՄ | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1580210,1 | 1580210,1 | 330805,5 | 278024,6 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՄԵԼԻՔՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267) 2-10-81, (0267) 2-37-79, (0267) 2-21-21, (0267) 2-49-59, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**04 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 30-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի <<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 08-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 5-րդ մասով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 28-ի <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեվո նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին>> N 08-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 1-ին մասի 1-ին կետում «22000000» թվերը փոխարինել «34500000» թվերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

Հավելված
Բերդ համայնքի ավագանու
2022թվականի ապրիլի 04-ի
N 31-Ա որոշման

**Արծվաբերդի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

Աշխատակիցների թվաքանակը՝ 22

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը/ դրամ/ | Հավելավճար | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Տնօրեն | 1 | 125 000 | | 125 000 |
| 2 | Մեթոդիստ ուս.գծով տնօրենի տեղակալ | 1 | 100 000 | | 100 000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 93 289 | | 93 289 |
| 4 | Դաստիարակ | 5 | 100 000 | | 500 000 |
| 5 | Դաստիարակի օգնական | 5 | 93 289 | | 466 445 |
| 6 | Բուժքույր | 1,5 | 93 289 | | 139 934 |
| 7 | Երաժշտական ղեկավար | 1 | 93 289 | | 93 289 |
| 8 | Խոհարար | 2 | 93 289 | | 186 578 |
| 9 | Խոհարարի օգնական | 1(0,5) | 93 289 | | 93 289 |
| 10 | Լվացքարար | 1 | 93 289 | | 93 289 |
| 11 | Տնտեսվար-պահեստապետ | 1,5 | 93 289 | | 139 934 |
| **Ընդամենը** | | **21** | **1 071 312** | **-** | **2 031 046** |

Աշխատակազմի քարտուղար Համիկ Մելիքյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267) 2 10 81, (0267) 2 37 79, (0267) 2 21 21, (0267) 2 49 59, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**04 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 32-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՇԵՆՔԸ, ՊԱՀԵՍՏԸ, ԱՐՏԱԴՐԱՄԱՍԸ ԵՎ ԾԱԾԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ <<ԷԿՈ ԳԱՐԴԵՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ>> ՍՊԸ-ԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Այգեձոր 19 փողոց, թիվ 7/1 հասցեում գտնվող 1454.1ք.մ մակերեսով արտաքին և 1293.53 ք.մ մակերեսով ներքին չափերով հյուրանոցի շենքը, պահեստը, արտադրամասը և ծածկը՝ 1558795 /մեկ միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամով և նրա պահպանման ու սպասարկման համար 4194.1 ք.մ մակերեսով հողամասը՝ 1153648 /մեկ միլիոն հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, որից՝ 2226.15ք.մ մակերերեսը՝ 315891/երեք հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր իննսունմեկ/ՀՀ դրամ, իսկ 1967.95ք.մ մակերերեսը՝ 837757/ութ հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր հիսունյոթ/ՀՀ դրամ կադաստրային արժեքներով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ <<Էկո Գարդեն արտադրական կորպորացիա>> ՍՊԸ-ին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ՆԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267) 2-10-81, (0267) 2-37-79, (0267) 2-21-21, (0267) 2-49-59, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**04 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 33-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ ՓՈԼԱԴՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Մովսես, 1 փողոց, 3 նրբանցք, 25 առևտրի սրահ հասցեում գտնվող 28.4 ք.մ մակերեսով արտաքին և 19.02 ք.մ մակերեսով ներքին չափերով առևտրի սրահը՝ 137002/մեկ հարյուր երեսուն յոթ հազար երկու/ ՀՀ դրամով և նրա պահպանման ու սպասարկման համար 0.0028 հա մակերեսով հողամասը՝ 4030 /չորս հազար հազար երեսուն/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Արմեն Ալբերտի Փոլադյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267) 2-10-81, (0267) 2-37-79, (0267) 2-21-21, (0267) 2-49-59, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**04 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 34-Ա**

## ԽՈՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ԱՂԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11-051-0130-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդ մասերը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել Խորեն Սամվելի Աղասյանի հայտը, իր սեփականությունը հանդիսացող 0.361 հա մակերեսով՝ 11-051-0130-0011 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակության փոփոխելու մասին, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր և տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

2.Հաստատել Խորեն Սամվելի Աղասյանի սեփականություն հանդիսացող 0.361 հա մակերեսով՝ 11-051-0130-0011 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողեր, անասնաշենք կառուցելու համար:

3.<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ